ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.31/40420-2025

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Ազգային անվտանգության մարմինների մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (Կ-1184-07.11.2025-ՊԱ-011/1) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները, լրամշակված նախագիծը, ամփոփաթերթը, ինչպես նաև նախագծում կատարված փոփոխությունների վերաբերյալ տեղեկանքը՝ գլխադասային հանձնաժողովում քննարկելու համար:

Միաժամանակ հայտնում ենք, որ «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի (Կ-1184[1]-07.11.2025-ՊԱ-011/1) վերաբերյալ առաջարկություններ չունենք:

Առաջարկում ենք հետևյալը՝

1. «Ազգային անվտանգության մարմինների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծն առաջարկվում է լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5-րդ հոդվածով.

«Հոդված 5. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 8. 1-ին հոդվածով.

«Հոդված 8. 1. Լիազորված մարմնի խորհրդանիշերը

1. Լիազորված մարմնի խորհրդանիշերն են դրոշը և զինանշանը:

2.Դրոշի և զինանշանի կանոնադրությունը, դրանց նկարագրությունը, դրոշի պահպանման և գործածման կարգը հաստատում է Լիազորված մարմնի ղեկավարը:»:

Լրացումը նպատակ ունի «Ազգային անվտանգության մարմինների մասին» օրենքով հստակ ամրագրել ՀՀ ազգային անվտանգության ծառայության խորհրդանիշերի վերաբերյալ իրավական հիմքերը:

Ընդ որում, առանց համապատասխան լիազորող նորմերի ՀՀ ԱԱԾ խորհրդանիշերին՝ դրոշին և զինանշանին վերաբերող իրավակարգավորումները սահմանված են ՀՀ նախագահի 2002 թվականի դեկտեմբերի 18-ի N ՆՀ-1228-Ն հրամանագրով (*հիմնվել է դրոշը, հաստատվել կանոնադրությունն ու նկարագրությունը*), ՀՀ ԱԱԾ տնօրենի 2003 թվականի հոկտեմբերի 27-ի N 3-Ն հրամանով (դրոշի պահպանման, պահման և օգտագործման կարգը) և ՀՀ կառավարության 2003 թվականի փետրվարի 6-ի N 177-Ն որոշմամբ (*զինանշանի նկարագրությունը*):

Առաջարկվող լրացմամբ պայմանավորված՝ անհրաժեշտություն կառաջանա օրենքի նախագծի **5-14-րդ հոդվածների հերթական համարակալումները փոխարինել համապատասխանաբար 6-15-րդ հոդվածներով**:

Միաժամանակ, օրենքի նախագծի 15-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետում ընդունման ենթակա իրավական ակտերի շարքում առաջարկվում է նախատեսել նաև օրենքի նախագծի 5-րդ հոդվածով նախատեսվող իրավական ակտը *(Դրոշի և զինանշանի կանոնադրությունը, դրանց նկարագրությունը, դրոշի պահպանման և գործածման կարգը սահմանելու մասին ԱԱԾ տնօրենի հրամանը):*

2. ՀՀ Ազգային ժողովի կողմից 04.12.2025թ. ամբողջությամբ ընդունվել է «Կիբեռանվտանգության մասին» օրենքի (**Կ-1139-20.08.2025-ՊԻ-011/2ամբ.**) և հարակից օրինագծերի փաթեթը: Փաթեթում ներառված էր նաև «Ազգային անվտանգության մարմինների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» (**Կ-1139[8]-20.08.2025-ՊԻ-011/2ամբ.)** օրենքի նախագիծը, որով «Ազգային անվտանգության մարմինների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասն արդեն իսկ լրացվել է նոր 5.7-րդ և 5.8-րդ կետերով: Նշվածով պայմանավորված՝

անհրաժեշտություն է առաջացել «Ազգային անվտանգության մարմինների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 10-րդ հոդվածի 2-րդ կետում «5. 6» և «5. 7» թվերը փոխարինել համապատասխանաբար «5.8» և «5.9» թվերով:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ